

ՄԵՐ ԽՈՍՏԵՐ

ՈՒՐ ՀԱՍԱՆՔ

Փառք Աստուծոյ... աման պրծանք սա զահմարտէն՝ և ունեցանք մէկ զոյգ կաթողիկոս:

Այլ ազգը փրկուած է... Բայց ո՛րք են սա... թուրք եղողները, հայ եկեղեցիէն հեռացողները, առանձին կաթողիկոսութիւն հաստատողները...

Չէ՛ որ Տոհմունի Եպիսկոպոս առո՛ք փառո՛ք մասնակցեցաւ կաթողիկոսական օծման, և բազմեցաւ «ՀԱՄԱԳՈՒՄԱՐ»-ին մէջ:

Ո՛րք մնացին այդ «բոլոր ընդդիմութիւն» ընող «ԱՄԲՈՂԶ ՀԱՆԼԻՊԻ ՀԱՅԵՐԸ», «վնասական կեցուածք» ունեցող Հայէպի Գաւառականը՝ «ԻՐ ԱՄԲՈՂԶ ԿԱԶՄՈՎ», հայ եկեղեցիէն հեռանալ սպառնացող «ԱՆՏԻՈՒԹԻ ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ» ՈՒ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ, իրենց շրջանին մէջ նոր կաթողիկոսութիւն հաստատել ուզող Սուէտիոյ «ԻՆԸ ՀԱՋԱՐ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ»:

Չտեսան, չլսեցին, որ սրբապիղծ Եպիսկոպոսը բազմեցաւ եկեղեցական համագումարին մէջ և իրենց Տ. Գալստեանները, Ինճէճիկեանները, Իզմիրլիեանները, Փափագեանները նստան անոր հետ կողք կողքի՝ և յորաքանցան շրթունք շրթունքի:

Ի՛նչ կը խորհին անոնք, Անտիոքի և Սուէտիոյ պատուաւորներ հայերը, երբ իրենց անունով զարնուած այդ բոլոր «զգայացուց» լուրերը իր առջին էջին, առաջին սխառակին, ամենալայն տողերուն վրայ օրը օրին, ամենամեծ եռանդով ու խնամքով փողով Պէյրութի զանազանական թերթը, այս անգամ իր 28 Ապրիլ թիւին երրորդ էջին, չորրորդ սխառակի մէջ խորհին մէջ կը գնէ «Անտիոքի բազմաթիւ ազգայիններու ստորագրութիւններով» իրեն զրկուած սա «ՃԵՂՈՒՄ»:

— «Անտիոքի հայութիւնը որեւէ պարագայի չափ մայր եկեղեցիէն բաժնուելու նպատակ չէ ունեցած եւ չունի: Բայց անիկա չուզեք ճանցնալ Տոհմունի Եպիսկոպոսին Անտիոքի օրհանգիստը վրայ ունեցած առաջնորդի հանգամանքը, եւ կր փափաքի բաժնուիլ Լաւրափոյ թեմէն՝ եթէ երբեք Տոհմունի Եպիսկոպոս Շառուաղի մընայ այդ թեմին առաջնորդը:

«Կեբէլի թէ Լաւրափոյ թեմէն բաժնուելու խօսքեր Եպիսկոպոսի եկեղեցիէն բաժնուելու մտքին հետ»:

Բայց պարոններ, ո՛վ ցոյցած է ձեր այդ «անմիջ» միտքը, ո՛վ հրապարակեց այդ շինուած լուրերը, ո՛վ դարձեց այդ անպատկառ զրպարտութիւնները, ո՛վ ձեր երեսին քսեց այդ սեւ մուրը, ո՛վ շարագործեց ձեր անունները, և ո՛վ ձեր կոյս պատուին գնովը եկեղեցական ժողովէն ներս աթոռներ ապահովեց իր Տ. Գալստեաններուն, Ինճէճիկեաններուն, Իզմիրլիեաններուն, Փափագեաններուն, Տ. Ղազարեաններուն, Պապիկեաններուն, Տ. Մելքոնեաններուն, Թաւրիկեաններուն, Էմ. Էմ.:

Եւ գիտէ՞ք թէ ինչու... ձեր բանկայինքն կերակրուելու համար: Ձեր կոյս անուան գնովը այդքան համար:

Բայց արդեօք սա «բազմաթիւ ազգայիններու ստորագրութեամբ» տեղւոյս զանազանական թերթին զրկուած «ՃԵՂՈՒՄ»-ն ալ կեղծիք մը և ալլաւարակութիւն մը չէ:

Այդ «ՃԵՂՈՒՄ»-ը կ'ըսէ թէ — «Անտիոքի հայութիւնը չուզեք ճանցնալ Տոհմունի Եպիսկոպոսին Անտիոքի օրհանգիստը վրայ ունեցած առաջնորդի հանգամանքը, եւ կր փափաքի բաժնուիլ Լաւրափոյ թեմէն՝ եթէ երբեք Տոհմունի Եպիսկոպոս Շառուաղի մընայ այդ թեմին առաջնորդը»: և ո՛չ ուրիշ բան:

Բայց ինչու այդ «ՃԵՂՈՒՄ»-ը Անտիոքի թաղականութիւնը պաշտօնապէս չենք, քանի որ ինքն է ամենաանարմատներէն: Որո՞նք են այդ անթիւ, անանուն «բազմաթիւ ազգայինները», որոնք այսպիսի պարագաներով մը զգաւած են իրենց վրայ: Կրնա՞յինք հասկնալ անոնցմէ գոնէ միջանկիւններուն անունները:

Ի՛նչ պատճառ կար չաւատալու զանազանական թերթին տուած տեղեկութիւններուն, քանի որ անոնք միշտ «մասնաւոր» կ'ըլլան և «սոսոյք». թող որ, շուրջ ակէն խմող Հայէպի «Եպիսկոպոս» ալ իր 22 Ապրիլ խմբագրականին մէջ գրեց. — «Գաւառականի չափ զատապարտելի է յանուն Սուէտիոյ օրհանգիստը խօսող ազգայիններուն եւ քաղաքացիներուն անորակելի դիմումը, որով կ'սպառնան հայ եկեղեցիէն հեռանալ՝ եթէ Եպիսկոպոս Եպիսկոպոս մասնակցի համագումարին»:

Եթէ իրաւ է որ Անտիոքի թաղականութիւնը չէր ուզէր ճանցնալ Տոհմունի Եպիսկոպոսին Անտիոքի շրջանին վրայ ունեցած առաջնորդի հանգամանքը, և հակառակ պարագային Լաւրափոյ թեմէն բաժնուիլ «անմիջ» փափաք մըն էր լոկ. ի՛նչ հարկ կար անպայման այս օրհանգիստը հայ-հայութիւն, Բաղաձայնական-Գաւառական, ժողով-ժողովուրդ, իրար խառնելու երբ հարցը մի քիչ ուշ կամ կանոնի, կարելի էր ներքնապէս կարգադրել Վեհ. Կաթողիկոսին հետ, առանց ճայներին դուրս հանելու:

Բայց սա «ՃԵՂՈՒՄ»-ը ըստ ինքն, ինքնին, ո՛չ ճշգրտ է, ո՛չ հերքում: Բոլորովին նոր պատմութիւն է. առաջինը...

Ի՛նչ կասկած, որ այս ալ նոյն խողովակէն ելած սո՛ւտ մըն է, կեղծիք, խաբարայութիւն... շինուած ու նիւթուած ժողովուրդին անունովը:

Ժողովուրդը, Հայութիւնը, բանէ՛ք մը լուր չունին, ո՛չ մէկ բան դիտէ, ոչինչ կը խօսի: Առաջինը նիւթողները, դարբնեցին վերջինը:

Կ'ըլլողին հազար անուշ...:

Բայց այս բոլորը չէ որ մեզ կը հետաքրքրէ, ասոնք չեն որ մեզի նիւթ փռուան, այլ այս բոլորին տակ թաղուած միտքը, այս ամէնի մէջ պաշտած, կեցած, աճած, սեւ օճէ՛ ուրուս պղծեց բանը, դուրս քաշել, ցոյց տալ, մեր պարտականութիւնն է. ի՛նչ հոգ թէ սակայն խայթէ մօր ձեռքը... Երբ կը բռնենք անոր պղծէն, դուրս կը քաշենք իր ծակէն, ցոյց կուտանք անոր թունաւոր գլուխը. ժողովուրդին է կամքը... Զանախանէ՛ք ամ պահել:

Բայց չի վերջացուցինք:

ԵՐԵՒԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՔԱՂԱՔ



ԵՐԵՒԱՆԻ ՊՈԵՍԿԱՌՈՒՆԵՐԸ (պիսնը)

Հ. — ԱՆԱՍՏԱՌԻՏԱԿԱՆ

ԷՆՍԹԹԻ

Անաստաւորական էնսթիթիւն ամբողջ Խորհրդային Միութեան մէջ երկրորդն է իր մեծութեամբ և առաջինն է իր ներքին սարքաւորումով, իր գիտական ամենավերջին կատարելութեամբ և գերմանական գործիքներով:

Էնսթիթիւնի տնօրէնն է Բրօք. Մասինս, որ երկար տարեկան գործած է Թուրքիոյ տնօրէնի մէջ, որ անաստաւորական մեծագոյն երկիրն է Բրօք. Մասինս կը նկատուի Խ. Միութեան ամենաշահաւոր անաստաւոր:

Էնսթիթիւն ունի իր քիմիական բաժինը, որուն պետն է Բրօք. Ղամբաւան, իր օգնականն է Սր. Բաւբալան:

Այս տարի բացուած է առաջին դասընթացը, որուն մէջ ուսանողներու յատկացուած թիւը, ըստ երկրին հետեւեալն է.

Հայաստան	40	Ուսանող
Վրաստան	60	»
Ազրպէյճան	60	»
Տաւրիստան և		
Հիւս. Կովկաս	20	»
Ուզբէյկիստան	20	»
Թուրքմէնիստան	10	»
Գումար	200	»

Թէև Հայաստանի յատկացուած թիւը՝ բազմաթիւ և Ազրպէյճանի և Վրաստանի՝ քիչ է, բայց ցեղով Հայ ուսանողներու թիւը կը կազմէ 0/0 50 տոկոս ըլլալով որ այս երկու երկրներն և Հիւս. Կովկասէն առնուած ուսանողներու մէջ կը գրտնոյն տեղացի Հայ ուսանողներ ալ: Ուսուցչական կազմը կը բաղկանայ 23 բրօքմէտօրներէ և 30 օգնականներէ:

Անաստաւորական էնսթիթիւն շրջանը չորս տարի է: Տարեկան պիւտճէն է 1,800,000 ռուբլի կամ 900,000 տոլար:

Էնսթիթիւն ունի իր հանրակացարանները, որոնք թիւով երեք են: Մէկը լրացած, երկրորդը լրանալու վրայ էր անցած ամառ, իսկ երրորդը պիտի շինուի, Բոլորն ալ Համալսարանի թաղին մէջ և ՀՊԿԻ Տան մօտին:

Էնսթիթիւն ունի երեք ֆաբրիկէ:

1. Բլինիքալէն — Բուժական
 2. Բրօքիլաքթիք — Նախադրուչական:
 3. Համաճարակային:
- Անաստաւորական համաճարակի զէմ պաշարող հիմնարկն է հակա-ժանտախտայինը, որուն շնորհիւ Հայաստանի գրեթէ բոլոր անասունները պատաւաստուած են և պաշարաւոր:

այժմ գոյութիւն չունի Հայաստանի սանձաններուն մէջ:

Էնսթիթիւն ունի իր գիտարարներ որ արտասանմանէն կը ստանալ զանազան լեզուներով 150 գիտական հանդէսներ: Գրադարանին գիրքերուն թիւը արդէն հասած է 15,000-ի: Ուսանողներուն 0/0 95-ը թուականու են և կը ստանան ամիսը 80-էն 100 ռուբլի:

Իւրաքանչիւր երկու ուսանողի կը տրուի մէկ «քօմբէքթ» գիրք, այսինքն դատաւանդութեան յատուկ գիրքերու ամբողջական հաւաքածոյ: Իւր Իւրաքանչիւր ուսանող ունի իր մանրագէտ գործիքը:

Անցեալ տարի էնսթիթիւն այցելած տարր գիտական մը տեսնելով սարքաւորումի կատարելութիւնը, յայտնած է իր հիացումը և ըստ էւ. «Այստեղ քանի հատ շիւ որ կայ, նոյնքան մանրագէտ կը տեսնեմ»:

Համալսարանի բաժինը լրացնելու առթիւ ըսեմ որ երեւան համալսարանական քաղաք դարձած է իր բովանդակութեամբ և մթնոլորտով: Այստեղեւ համար ունի խաղաղ և հանդիս կլիմայ և այժմ՝ ամէն յարմարութիւններ:

Համալսարանական և մասնագիտական վարժարաններու ուսանողութեան թիւը այս տարի 12,000 է: Մայրաքաղաքին բնակչութիւնը այս տարի 90,000 հաշուելով, մօտաւորապէս 0/0 13-ը ուսանողութիւնը կը կազմէ:

ԳԻՏՈՒԹԵԱՆՑ

ԵՆ

ԱՐՈՒԵՍԻ ԷՆՍԹԹԻ

Անիկա տեսակ մը կանառ է, որ գոյութիւն ունի չորս տարիէ ի վեր և կը գտնուի Կուլտուրայի Տան մէջ:

Էնսթիթիւն իր առիթ կանոնաւորութեամբ բաժնուած է եղեր երեք մասի. — 1. բնական, պատմական, և մաթեմատիկական: 2. համալսարանական — ազգագրական: 3. արուեստի բաժին:

Իւրաքանչիւր բաժին ունի եղեր 10-15 անդամ, որոնք կ'ընտրուին թեկնածուներու մէջէն՝ էնսթիթիւնի ժողովին մէջ և կը հաստատուին Լուս. Ժող. Կոմիտարիատէն, որուն կապուած է էնսթիթիւն:

Այժմ Արուեստի բաժինը զատուած է և էնսթիթիւն կը կոչուի Գիտութեանց էնսթիթիւն:

Էնսթիթիւն կազմակերպած է գիտական արշաւախուժարք և այս կերպով հաւաքուած է Երևանի հայ ժողովրդական երգիչ Դոստ. Կարիբ հատ, ազգագրական նախք, և Էն. Ս. Այս աշխատանքներու մասին կ'ըլլան պարբերական գեկոյցներ: Էնսթիթիւն ժողովին մէջ և գեկոյցները յետոյ կը տպագրուին:

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Պ. Մ. ՏԱՍԱՏԵԱՆԻՆ

ՍԻՐԵԼԻ ԸՆԿԵՐ,

Եթէ դուք Ռամ. — Ազատական կուսակցութեան պարզ մէկ անդամը եղած ըլլալիք, հարկ չպիտի համարէի այս բաց նամակով Ձեզմէ քանի մը յուսարանութիւններ խորհրու, ի հանդարտեցում շփոթած ժողովուրդ:

Դուք, պատուական ընկեր, մեր կուսակցութեան վերջինն էք, մեր մէջ վարած էք մէկ անգամ կուսակցական պատասխանատու պաշտօններ, չինաւ էք հեղինակաւոր գիրք, կը վայելիք անբասիր յիշատիւական անուն, և վերջապէս Ձեր երբեմնի ազգային գործիչի հանգամանքով ու սիրուած անհատականութեամբ, մեր մէջ սենիք առաջնորդի, պաշտօնական վարչի: Արդ, ի՛նչպէս Ձեզ տեսնել Ապրիլ 26ի օրը Դաշնակցական Ձ. Ե. Ռ. Միութեան կողքին՝ երբ Ձեր հուսակցութեան, ո՛չ իսկ պատասխան մը գրած էր իրեն արուած հրաւերին: Իրապէս մեզի համար շատ դժուորն էր Ձեզ տեսնել այն չափանաւ պատմականներու հետ՝ որոնք զաշնակցութեան թոյնով լեցուած, զեռերէկ խաղաղեցիկ Չօպանեանը Բարիքի մէջ, և սպառնացին Բարեգործականի կողքին շմանակելի Հայաստանի ասանմանկէն: Եւ դեռ ո՛ր մէկը թուել առանց ցաւ զայրոյթի զգալու:

Իրաւ է թէ, դուք ունիք Ձեր անհատական ազատութիւնը, և թէ Ռամ. — Գաղտնիկ կուսակցութիւն ո՛չ մէկ բանով կը ճնշէ իր անդամներուն ազատ կամքին վրայ: Բայց, յարգելի ընկեր, ինչու չի խորհիլ, թէ Ձեր անունն իսկ պաշտօնականութեան մը ունի մեր մէջ, և այդ բանն է որ կ'ուզեն շահագործել ուրիշները:

Արդեօք դուք ալ մեզի չափ խոր ցաւ մը չգրաւիք, և չվերլուծեցիք այն բանը, որ, սպասուելի բեմէն տեղւոյս Ռամ. — Ազատական և կուսակցական շմանակելի պաշտօնապէս յայտարարուելէ յետոյ, դուք ոտք կ'ըլլալիք որպէս անհատ Տաճարեան խօսքով: Հոն ներկայ բազմութիւնը, կամ այս բանը լսող հեռաւոր հայրենիք, ի՛նչ պիտի խորհիլ, ի՛նչ իմաստ պիտի տայ: Այո՛, դուք կ'ըրնայիք անհուն ազատ Էրու՛մ եթէ այդ բանը չվնասէր Ձեր կուսակցութեան վարկին:

Եթէ քաղաքականութիւն է որ կենք, եթէ սուրբ համարաշխարհիւն է որ կը քարոզէք, եթէ մէկ քարով երկու թռչուն կուգեք որսալ, առանց ժամանակը շատոնց անցած է: Ո՛չ կրնաք չարիքը զանապուհութեան մէջէն հանել, և ո՛չ ալ կրնաք մեր կուսակցական շրջանակները քնացնել:

Որքան ատեն որ Դաշնակցութեան չի խոնարհիլ հայու Հայաստանին առաջ, որքան ատեն որ ան չի հրաժարիլ իր համայնախորհրդական միջոցներէ, որքան ատեն որ ան մաս չկազմէր հայութեանն՝ ո՛չ մէկ Ռամ. — Ազատական կրնայ անոնց կողքին կենալ՝ նոյնիսկ լացի բեմին վրայ:

ԱԶԱՏԱԿԱՆ ՄԸ

ՄԵՐ ՅԱՌԱՋԻԿԱՅ ԹԻՒՈՂ

ՔԱՐԴԱՏԵՔ, ԽԻՂԱՏԵՔ, ՏԱՐԱՍԵՏԵՔ

Հայէպի «Եպիսկոպոս» մեզ մօտ ցուս կուրեսը նամակ մը ունի. քող սպարաւորը հոս գայ ստանալու համար:

Հակառակ պարագային պատասխանատու չենք...

